PRESS RELEASE

PR23/205

ԱՄՀ գործադիր խորհուրդն ավարտում է Հայաստանի հետ նոր «Պահուստային ծրագրի» առաջին ամփոփիչ ստուգումը

ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

- ԱՄՀ գործադիր խորհուրդն ավարտել է Հայաստանի հետ «Պահուստային ծրագրի» (SBA) առաջին ամփոփիչ ստուգումը՝ երկրին տալով շուրջ 24.5 միլիոն ԱՄՆ դոլարից օգտվելու հնարավորություն։
- Հայաստանի տնտեսական ակտիվությունը 2022 թ. -ին շատ բարձր էր, ընդ որում իրական ՀՆԱ-ն 12.6 տոկոսով աճեց՝ պայմանավորված բարձր սպառմամբ և արտաքին պահանջարկով։ 2023 թ. -ին 5.5 տոկոսանոց աճ է կանխատեսվում։
- «Պահուստային ծրագիրը», որն Հայաստանի իշխանությունները դիտարկում են որպես կանխարգելիչ, ունի քաղաքականության շարունակականությունն ապահովելու, կառուցվածքային բարեփոխումներն առաջ մղելու և մակրոտնտեսական, ֆինանսական և հարկաբյուջետային կայունությունը պահպանելու նպատակ։

Վաշինգտոն, ԿՇ - 12 հունիսի 2023 թ. Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գործադիր խորհուրդն ավարտել է Հայաստանի «Պահուստային ծրագրի» շրջանակում առաջին ամփոփիչ ստուգումը, որը տալիս է 18.4 միլիոն ՓՀԻ-ից (շուրջ 24.5 միլիոն ԱՄՆ դոլարի) օգտվելու հնարավորություն՝ հասանելի ընդհանուր ՓՀԻ հասցնելով 36.8 միլիոնի (շուրջ 49 միլիոն ԱՄՆ դոլարի)։ ԱՄՀ խորհուրդը «Պահուստային ծրագիրը» հաստատել է 2022 թ.-ի դեկտեմբերի 12-ին (տե՛ս թիվ 22/429 մամուլի հաղորդագրությունը)։ ՀՀ իշխանությունները շարունակում են ծրագիրը դիտարկել որպես կանխարգելիչ։ Գործադիր խորհրդի կողմից առաջին ամփոփիչ ստուգման վերաբերյալ որոշումը կայացվել է առանց նիստ գումարելու։ [1]

Հայաստանի տնտեսական ակտիվությունը 2022 թ.-ին շատ բարձր էր, ընդ որում իրական ՀՆԱ-ն աճում էր 12.6 տոկոսով՝ պայմանավորված բարձր սպառմամբ և արտաքին պահանջարկով և սնուցվում Ռուսաստանից արտարժույթի և միգրանտների մեծ ներհոսքով։ Աճի թափը պահպանվեց 2023թ.-ի առաջին եռամսյակում՝ շինարարության, ծառայությունների և առևտրին առնչվող ոլորտների ընդլայնման արդյունքում։ Ընթացիկ հաշվի պակասուրդը նվազեց՝ տարվա համար կազմելով ՀՆԱ-ի 0.9 տոկոսը, ինչին նպաստեցին զբոսաշրջության բարձր եկամուտները։ Աճեցին նաև օտարերկրյա ուղղակի ներդրումները և այլ ներդրումների ներհոսքերը՝ գլխավորապես արտացոլելով Ռուսաստանից կապիտալի ներհոսքերը։ Համախառն պահուստերն ավելացան՝ հասնելով 4.1 միլիարդ ԱՄՆ դոլարի։ Դրամը արժևորվեց ավելի քան 20 տոկոսով 2022 թ.-ին։

[1] Գործադիր խորհուրդը որոշումները կայացնում է առարկությունների բացակայության դեպքում կիրառվող ընթացակարգով, երբ Խորհուրդը համաձայնում է, որ առաջարկը կարող է դիտարկվել առանց պաշտոնական քննարկումներ հրավիրելու։

700 19th Street NW
Washington, DC 20431
USA

Գնաճային ճնշումները 2022 թ. վերջից 2023 թ.-ի սկիզբը սկսեցին մեղմանալ: Գնաճի ցուցանիշը 2023 թ. ապրիլին նվազեց՝ կազմելով 3.2 տոկոս (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), հիմնականում բազայի ազդեցությունների և սննդամթերքի ու տրանսպորտի գների արագ նվազման հաշվին: Սակայն բնականոն գնաճը 2023 թ.-ի ապրիլին պահպանվեց գնաճի ցուցանիշից բարձր՝ 4.3 տոկոս (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ) : Գնաճային ճնշումների հիմնական աղբյուրն անվանական աշխատավարձերի երկնիշ աճը և ծառայությունների գների աճն էին:

Հարկաբյուջետային դիրքը 2022. թ.-ին նշանակալիորեն բարելավվեց: Հարկաբյուջետային դեֆիցիտի ցուցանիշը 2022 թ.-ին նվազեց բարձր եկամուտների և ծախսերի թերակատարման հաշվին՝ կազմելով ՀՆԱ-ի 2.1 տոկոսը : Կենտրոնական կառավարության պարտքը նվազեց 14 տոկոսային կետով՝ կազմելով ՀՆԱ-ի 46.7 տոկոսը՝ պայմանավորված պակասուրդի նվազմամբ, բարձր անվանական աճով և փոխարժեքի արժևորմամբ:

Ծրագիրն ընդհանուր առմամբ նախատեսված հունով է ընթանում: Դեկտեմբերի վերջի դրությամբ բոլոր քանակական կատարողականի չափորոշիչները (ՔԿՉ) և կողմնորոշիչ թիրախները (ԿԹ) կատարվել են, և լավ առաջընթաց է գրանցվել կառուցվածքային հենանիշերի (ԿՀ) կատարման ուղղությամբ: Մարտի վերջի կատարողական հենանիշը, որը պահանջում էր Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի (ԱՆԻՖ) լիազորությունների, հաշվետվությունների ներկայացման, թափանցիկության և կենսունակության պահանջները հստակեցնող որոշման ընդունում, կատարվել է որպես սույն ամփոփիչ ստուգման նախապայման գործողություն:

2023 թ. -ի տնտեսական հեռանկարն ընդհանուր առմամբ դրական է, թեև նշանակալի ռիսկերը պահպանվում են: Կանխատեսվում է ՀՆԱ-ի աճի տեմպի դանդաղում, սակայն սպասվում է, որ այն 5.5 տոկոս կպահպանվի՝ ուժեղ թափի, սպառման և ներդրումների շնորհիվ : Ծառայությունների առևտրի և դրամական փոխանցումների բնականոն հուն վերադառնալով՝ ընթացիկ հաշվի պակասուրդի ընդլայնում է սպասվում: Գնաճն ակնկալվում է, որ մեկ տարվա ընթացքում կկայունանա ՀՀ ԿԲ թիրախի՝ 4 տոկոսի մակարդակում: Հեռանկարը ենթակա է բարձրացած ռիսկերի, որոնք բխում են արտաքին դժվարին միջավայրից, այդ թվում՝ տարածաշրջանի լարվածությունից, համաշխարհային ավելի խիստ ֆինանսական պայմաններից և խոշոր առևտրային գործընկերների աճի տեմպի դանդաղումից:

Մակրոտնտեսական քաղաքականությունն անհրաժեշտ է, որ կարճաժամկետ հեռանկարում կանխի տնտեսության գերատաքացումը՝ միաժամանակ միջնաժամկետ հեռանկարում աջակցելով ներառական և դիակայուն աճին :

- Եթե աճը և եկամուտները կանխատեսվածից բարձր լինեն, հարկաբյուջետային բուֆերների կառուցումն առաջնահերթ կլինի: Միևնույն ժամանակ, եկամուտների մոբիլիզացման ջանքերն անհրաժեշտ է շարունակել, այդ թվում՝ ընդլայնելով հարկման բազան և պայքարելով ոչ ֆորմալության դեմ:

- Դրամավարկային քաղաքականության վճռորոշ և նախաձեռնողական խստացմամբ հաջողվել է հասնել գնաճային ճնշումների զսպման, սակայն դրամավարկային քաղաքականությունն անհրաժեշտ է, որ պահպանի զգոնությունն ու տվյալներից կախվածությունը: Ֆինանսական հատվածի ռիսկերը, որոնք կապված են անշարժ գույքի ոլորտի հետ, պահանջում են ուշի ուշով մոնիթորինգ՝ վերահսկողական գործիքների հզորացմամբ:
- Հայաստանի երկարաժամկետ աճի ներուժի բացահայտման համար՝ կառուցվածքային բարեփոխումների իրականացման հարցում շարունակական առաջընթացի կարիք կա, այդ թվում՝ խթանելով առևտրային կապերը և բազմազանեցումը, բարձրացնելով ֆինանսների մատչելիությունը, ավարտելով կառավարման բարեփոխումները և բարելավելով կլիմայի փոփոխությանը դիմակայունությունը:

Աղյուսակ 1. Հայաստան.Տնտեսական և ֆինանսական ընտրված ցուցանիշներ, 2020–28 թթ.

	2020	2021	2022	2023	2024	2025	2026	2027	2028
	Փաստ.	Փաստ.	Նախն.	Կանխ..					
Ազգային եկամուտներ և գներ									
Իրական ՀՆԱ (տոկոսային փոփոխություն)	-7.2	5.7	12.6	5.5	5.0	4.5	4.5	4.5	4.5
Վերջնական սպառման ծախսեր, նպաստ.աճին	-10.5	4.0	6.6	4.3	2.4	2.2	1.8	1.7	1.8
Համախառն հիմն.կապիտալի կուտակում, նպաստ.աճին	-0.2	1.1	1.7	3.1	2.8	2.9	3.0	3.0	3.2
Նյութական շրջանառու միջոցների փոփոխություն, նպաստ.աճին	0.1	0.7	-0.9	-1.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Ապրանքների և ծառայությունների զուտ արտահանում, նպաստ. աճին	3.4	-0.2	5.2	-0.9	-0.2	-0.6	-0.3	-0.1	-0.5
Համախառն ներքին արդյունք (միլիարդ դրամ)	6,182	6,983	8,497	9,528	10,451	11,358	12,332	13,390	14,538
Համախառն ներքին արդյունք (միլիոն ԱՄՆ դոլար)	12,642	13,861	19,503	23,873	25,121	26,251	27,295	28,896	31,021
Համախառն ներքին արդյունք՝ մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	4,269	4,679	6,584	8,058	8,478	8,859	9,211	9,750	10,467
ՍԳԻ (ժամանակահատվածի միջին, տոկոսային փոփոխություն)	1.2	7.2	8.6	5.6	4.0	4.0	4.0	4.0	4.0
ՍԳԻ (ժամանակահատվածի վերջ, տոկոսային փոփոխություն)	3.7	7.7	8.3	4.5	4.0	4.0	4.0	4.0	4.0
ՀՆԱ դեֆլյատոր (տոկոսային փոփոխություն)	1.8	6.9	8.1	6.3	4.5	4.0	3.9	3.9	3.9
Գործազրկության մակարդակ (տոկոսով)	18.2	15.3	13.0	13.5	14.0	14.0	14.0	14.0	14.0
Ներդրումներ և խնայողություններ (տոկոս ՀՆԱ-ում)									
Ներդրումներ	19.7	20.7	19.4	23.2	23.2	23.4	23.6	23.7	23.8
Ազգային խնայողություններ	15.9	17.0	18.5	21.7	20.2	19.8	19.7	19.8	19.4
Փող և վարկ (ժամանակահատվածի վերջ)									
Փողի բազա (տոկոսային փոփոխություն)	18.3	17.1	5.0	3.3	4.5	6.1	7.8	6.7	7.6
Փողի զանգված (տոկոսային փոփոխություն)	9.0	13.1	16.1	11.6	9.7	8.1	8.6	8.6	9.3
Մասնավոր հատվածի վարկավորման աճ (տոկոսային փոփոխություն)	14.3	-3.9	4.5	9.0	8.0	8.0	6.8	6.0	6.0
Կենտրոնական կառավարության գործառնություններ (ՀՆԱ-ի տոկոս)									
Եկամուտներ և դրամաշնորհներ	25.2	24.1	24.3	24.5	24.8	25.0	25.4	25.8	26.2
Որից ՝հարկային եկամուտներ	22.0	22.1	21.9	22.7	23.0	23.2	23.5	23.9	24.3
Ծախսեր	30.6	28.7	26.4	27.4	27.5	27.5	27.7	27.8	27.9
Ընդհանուր հաշվեկշիռը՝ դրամարկղային հիմունքով	-5.4	-4.6	-2.1	-2.9	-2.7	-2.5	-2.3	-2.0	-1.8
Պետական և պետության կողմից երաշխավորված (ՊՊԵ) պարտք (ՀՆԱ-ի տոկոս)	67.4	63.4	49.3	49.6	50.1	51.3	51.4	50.7	49.7
Կենտրոնական կառավարության ՊՊԵ պարտք (տոկոս) (տոկոս)	63.5	60.3	46.7	47.2	47.7	49.2	49.6	49.2	48.1
Արտարժութային պարտքի մասնաբաժին (տոկոս)	77.0	72.6	64.0	62.2	60.7	57.8	56.4	54.8	50.1

Արտաքին հատված									
Ապրանքների և ծառայությունների արտահանում (միլիոն ԱՄՆ դոլար)	3,818	5,012	9,698	11,407	11,949	12,407	13,001	13,754	14,635
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (միլիոն ԱՄՆ դոլար)	-5,082	-6,120	-10,118	-12,273	-13,102	-13,761	-14,482	-15,324	-16,398
Ապրանքների և ծառայությունների արտահանում (տոկոսային փոփոխություն)	-34.1	31.3	93.5	17.6	4.8	3.8	4.8	5.8	6.4
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (տոկոսային փոփոխություն)	-33.2	20.4	65.3	21.3	6.8	5.0	5.2	5.8	7.0
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ)	-3.8	-3.7	-0.9	-1.6	-3.0	-3.6	-3.9	-4.0	-4.5
ՕՈՒՆ (զուտ, միլիոն ԱՄՆ դոլար)	86	342	948	410	513	590	613	632	663
Համախառն միջազգային պահուստներ (միլիոն ԱՄՆ դոլար)	2,616	3,230	4,103	4,248	4,268	4,274	4,292	4,355	4,300
Ներմուծման ծածկույթ 1/	5.1	3.8	4.0	3.9	3.7	3.5	3.4	3.2	3.0
Ժամանակահատվածի վերջի փոխարժեք (դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)	523	480	394	…	…	…	…	…	…
Միջին փոխարժեք (դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)	489	504	436	…	…	…	…	…	…

Աղբյուրները՝ ՀՀ իշխանությունների և Հիմնադրամի աշխատակազմի գնահատականներ և կանխատեսումներ

1/ Համախառն միջազգային պահուստները՝ ըստ ապրանքների և ծառայությունների ներմուծման հաջորդ տարվա ամիսների, այդ թվում՝ պահվող ՓՀԻ։